



*ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԱՍՈՑԻԱՅԻԱ:*

*ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ
ԴԻՎԻԴԵՆՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ*

Հեղինակ՝ Անի Գևորգյան

Տնտեսական և սոցիալական խորհուրդների և համանման կառույցների միջազգային
ասոցիացիա. ՀՀ Հանրային Խորհրդի անդամակցությունը. Համագործակցության եզրերն ու
հնարավոր դիվիդենտների ձեռքբերումը

- Ներածություն
- Տնտեսական և սոցիալական խորհուրդների և համանման կառույցների միջազգային
Ասոցիացիա /ՏՄՄՄ/
 1. Կառուցվածք
 2. Նպատակներ
 3. Անդամներ
 4. Աշխատանքային մեխանիզմներ
- ՏՄՄՄ աշխատանքային փորձը
- ՏՄՄՄ համագործակցությունը միջազգային կառույցների հետ
- ՏՄՄՄ-ի գործունեության վերլուծությունը և դերակատարումը գլոբալ համատեքստում
- ՀՀ Հանրային Խորհուրդ /ՀՀ ՀԽ/
- ՀՀ ՀԽ-ի պոտենցիալ անդամակցությունը ՏՄՄՄ-ին. ակնկալվող արդյունքները և
հնարավոր դիվիդենտները

Ներածություն

Ժողովրդավարության ուղին որդեգրած երկրներում իշխանություն-հասարակություն կապի ձևավորմանն է ուղղված տարաբնույթ ինստիտուտների հիմնումը, որոնք հնարավորություն են տալիս հասարակությանը ուղղակի կամ անուղղակի ներգրավված լինել իշխանությունների գործունեության մեջ եւ հաշվետու դարձնել վերջիններիս ցանկացած ձեռնարկի պարագայում:

Այս իմաստով՝ առաջնային դերը պատկանում է քաղաքացիական հասարակությանը, մասնավորապես ՀԿ սեկտորին՝ այն այլընտրանքային ուժին, որն իր մեջ ներառում է տարբեր քաղաքական շերտերին եւ նրանց շահերը:

Սակայն, եթե քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հանդիսանում են քաղաքացիական մասնակցության ներքեփց-վերե վեկտորը, ապա հանրային-տնտեսական-սոցիալական խորհուրդները նույն նպատակին ծառայող հանրային իշխանությունների նախաձեռնությամբ ստեղծված վերեփց-ներքե ալիքն են: Այս կառույցները ներկայացնում են իրենց պետությունների քաղաքացիական հասարակության վառ արտահայտված շերտերը, դառնում քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ շարժիչները՝ հետեւաբար ապահովելով իշխանություն-հասարակություն երկուստեք կապը, երկու կողմերի համար ընդունելի լուծումների որոնումը եւ դրանց իրագործելիությանը նպաստումը, պետական որոշումների ընդունման եւ իրականացման գործընթացում կոնսենսուսը, հանրային կառավարման ընդհանուր գնահատումն ու մոնիթորինգը: Դրանց առկայությունն ու արդյունավետ աշխատանքը հանգեցնում է պետական քաղաքականության, կարեւորագույն երեւոյթների եւ իրադարձությունների վերաբերյալ թափանցիկության ապահովմանը եւ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանը, հասարակական նախաձեռնության զարգացման աջակցությանը, անկախ վերլուծական օժանդակության խթանմանը:

Ավելի քան 90 խորհուրդներ՝ այս կամ այն ձևաչափով, անվանմամբ, իրավասությամբ, առաքելությամբ, գործառույթներով, գոյություն ունեն աշխարհի բազմաթիվ երկրներում, ընդ որում, կան ինչպես ընդհանուր հարցերով, այնպես էլ հատուկ գործառույթներ ունեցող կառույցներ:

Սակայն դրանց հիմնական սկզբունքը մեկն է՝ միջնորդ հանդիսանալ եւ սատարել իշխանություն-հասարակություն հարաբերություններին, դառնալ այն կապող օղակը, որը հնարավորություն կտա հասարակությանը ազդել իշխանության կողմից վարվող քաղաքականության վրա, իսկ իշխանությանը՝ իրենց գործողություններն ուղղորդել հասարակության պահանջարկին համընթաց:

Կարծում եմ՝ ահա այս գաղափարն է միավորել տարբեր երկրների տնտեսական-սոցիալական-հանրային խորհուրդներին մեկ “անձրեւանոցի տակ”՝ ստեղծել միջկառավարական “Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների միջազգային ասոցիացիա” կազմակերպությունը՝ արդյունավետ դարձնելով միջազգային համագործակցությունը եւ ապահովելով համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ կառուցողական միջավայր:

Այս աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրել Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների միջազգային ասոցիացիայի դերը, գործունեության ոլորտները, աշխատանքային փորձը, աշխատող մեխանիզմներն ու գործընթացները եւ ՀՀ Հանրային խորհրդի (ՀԽ)՝ կառույցին անդամակցելու պարագայում դուրս բերել այն հարթությունները, համագործակցության եզրերը, ինտեգրման ուղիները, որոնք կնպաստեն իրական համագործակցության նախաձեռնմանը, կառուցողական դեր կունենան ՀՀ հանրային խորհրդի աշխատանքների բարելավման գործում, եւ կդառնան այն անկյունաքարային ցուցիչները, որոնք կապահովեն ՀՀ ՀԽ-ի արդյունավետ անդամակցությունն այս կառույցին:

Պետք է արձանագրենք, որ ՀՀ անդամակցության փորձը բազմաթիվ միջազգային կառույցների թույլ է տալիս փաստել, որ հաճախ ՀՀ-միջազգային կառույց կապը հաճախ սահմանափակվում է անդամակցության փաստի արձանագրմամբ եւ տարեկան առավելագույնը մի քանի հանդիպումների անցկացմամբ: Այս ձեւաչափը իրապես խոչընդոտում է անդամակցությունից հետո առավելագույն դիվիդենդների ստացմանը, փորձի փոխանակմանը, աշխատանքային նոր հարթությունների բացահայտմանը, նոր մեխանիզմների ներդրմանը, որը մեծապես կնպաստեր այս կամ այն ազգային կառույցի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Այդ պատճառով, որպեսզի Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների միջազգային ասոցիացիային ՀՀ հանրային խորհրդի անդամակցումը չդառնա սոսկ փաստի արձանագրում եւ հերթական անբովանդակ ձեռնարկ, այս հետազոտության մեջ կփորձեմ հասկանալ, թե որ ոլորտներում եւ ինչ չափով են հնարավոր ՀՀ ՀԽ գործունեության ընդլայնումը, Ասոցիացիայի աշխատանքային ոլորտների զուգահեռների անցկացումը եւ համագործակցության վեկտորների բազմապատկումը:

Սա հնարավորություն կտա ՀՀ ՀԽ-ին տնտեսական-սոցիալական զարգացմանն ուղղված այս հզոր մեքենայի աշխատող մաս կազմել, կիսել ընդհանուր արժեքներն ու սկզբունքները, հասնել քաղաքական մերձեցման, եւ մասնակից դառնալ այս միջազգային “շարժմանը”: Ասոցիացիայում, բացի անդամ-խորհուրդներից, երկրի իշխանությունները նույնպես իրավասու են բարձրացնել իրենց համար ցանկալի թեմաներ (համաձայնեցնելով ՀԽ շահերին), հանգամանք, որը թույլ կտա ՀՀ առջեւ դրված գլոբալ, ամբողջ հասարակության շահերին առնչվող խնդիրները բարձրացնել միջպետական, միջազգային նոր մակարդակի:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՍ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ (ՏՄԽՄԱ)**

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների միջազգային ասոցիացիան (ՏՄԽՄԱ) ստեղծվեց 1999թ.-ին՝ ի պատասխան մարդկության դեմ ծառայած գլոբալ տնտեսական եւ սոցիալական խնդիրների, որը հնարավորություն կտար տեղեկատվության անխոչընդոտ հոսքի եւ փաստաթղթերի տարբեր աղբյուրների ազատ մուտքի հնարավորություն:

Եթե ստեղծման պահին նրան անդամակցում էին 24 եւ 3 ասոցիատիվ անդամներ, ապա ներկայումս կառույցի կազմում են Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի եւ Աֆրիկայի 56 երկրների ազգային կառույցներ, որոնցից յուրաքանչյուրի անկախությունը ապահովվում է Ասոցիացիայի կողմից: Սա ամենեւին «ստատիկ» թիվ չէ, քանի որ յուրաքանչյուր տարի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ անդամների թիվը համալրվում է այժմ էլ կազմակերպությանը անդամակցության դիմում են ներկայացրել 8 երկրների ՏՄԽ-ներ: Կառույցի գրասենյակը տեղակայված է Փարիզում:

Ասոցիացիայի աշխատանքներն իրականացվում են 4 հիմնական մարմինների միջոցով՝ Նախագահ, Գլխավոր Ասամբլեա, Խորհուրդ (Board), Գլխավոր քարտուղարություն:

Ըստ օրենսդրության, Գլխավոր Ասամբլեան հանդիպում է տարեկան ամենաքիչը մեկ անգամ եւ Ասոցիացիային վերաբերող բոլոր հիմնական որոշումներ կայացնողն է:

Քանի որ կառույցը շահագրգռված է նոր խորհուրդների անդամակցության մեջ, Գլխավոր Ասամբլեայի տարեկան մեկ հանդիպմանը զուգահեռ անց են կացվում նաեւ Միջազգային հանդիպումները (International Meetings), նախաձեռնություն, որը բաց է բոլոր ՏՄԽ-ների համար՝ անկախ նրանից, թե նրանք անդամակցում են Ասոցիացիային, թե ոչ (2 տարին մեկ անգամ՝ պարտադիր): Այս հանդիպումների առաջնային շարժառիթը միմյանց մասին տեղեկատվության ստացումն է, դեռ չանդամագրված ՏՄԽ-ների “գայթակղումը”, ընդհանուր խնդիրների որոշումը եւ համատեղ քայլերի կոորդինացումը:

Այս կառույցում որոշումները նախապատրաստվում եւ առաջադրվում են Խորհրդի միջոցով: Խորհրդի կազմի մեջ պետք է մտնեն առնվազն 10 առավելագույն՝ 15 անդամներ, որոնք ընտրվում են Ասոցիացիայի Գլխավոր Ասամբլեայի կողմից հաշվի առնելով

խորհուրդը ներկայացնող պետության աշխարհագրությունը եւ յուրաքանչյուր երկու տարին մեկ փոփոխվում են (տես հավելված 1): Խորհուրդը ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է երկամյա ժամկետով բոլոր անդամների ընդհանուր համաձայնության արդյունքում: Նախագահին է բաժին հասնում ՏՄԽՄԱ-ի ներկայացումը եւ Միջազգային հանդիպումների կազմակերպումը: Իր ստեղծումից ի վեր Ասոցիացիայի նախագահությունը ստանձնել են հաջորդաբար Նիդեռլանդների, Ալժիրի, Ֆրանսիայի, Չինաստանի, Բրազիլիայի, ապա Հունգարիայի համապատասխան կառույցները: Նախագահությունը ստանձնվում է ռոտացիոն սկզբունքով՝ նորից աշխարհագրական եւ մշակութային բալանսը նկատի ունենալով:

Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է որոշումների իրականացմանն ուղղված ամենօրյա գործունեության եւ դրանց կատարողականի մասին հաշվետվությունների ներկայացման համար:

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների միջազգային ասոցիացիայի հիմնական նպատակներն են՝

- Ասոցիացիայի անդամների միջեւ երկխոսության, տեսակետների ինչպես նաեւ աշխատանքային պրակտիկայի փոխանակման հնարավորության ընձեռումը, ավելի լայն համատեքստում՝ համաաշխարհային մակարդակով տնտեսական եւ սոցիալական գործընկերների միջեւ համագործակցության խթանումը,
- խորհրդատվական գործառույթի զարգացմանն օժանդակումը, սոցիալական եւ քաղաքացիական երկխոսության ակտիվացման քաջալերումը, ավելի ընդհանրական առումով՝ միասնական ժողովրդավարության (participatory democracy) զարգացումը, սոցիալական գործընկերների ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կատարելագործման համար անհրաժեշտ մյուս բաղկացուցիչների առկայությունը՝ որպես ժամանակակից հասարակություններում արդյունավետ կառավարման եւ կայուն ժողովրդավարացման գործընթացի գլխավոր գործառույթ,
- տնտեսական եւ սոցիալական խորհուրդների ստեղծման խթանումը երկրներում, որտեղ դեռ այսպիսի կառույցներ ձեւավորված չեն՝ բազմաբնույթ հանդիպումների, աշխատանքային փորձի տարածման եւ փոխանակման, այդպիսի խորհուրդների նշանակության շեշտման եւ դրանց դերի մասսայականացման ճանապարհով,
- Ասոցիացիայի անդամներից յուրաքանչյուրի կողմից կառույցի աշխատանքներին իրենց ավանդի ներդրումը, ինչպես նաեւ նրանց ներկայացումը այնպիսի միջազգային կառույցներում, ինչպիսիք են Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհուրդը եւ այլն,
- ավելի լայն առումով՝ իր ներդրումն ունենալը մարդկության բարգավաճման եւ տնտեսական զարգացման գործում ՄԱԿ-ի սկզբունքների, Մարդու իրավունքների միջազգային հռչակագրի եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից հաստատված հիմնարար սկզբունքներին համահունչ:

Իր անդամներից յուրաքանչյուրին դիտելով որպես առանձին եւ անկախ միավորներ՝ միեւնույն ժամանակ կառույցը փորձում է համախմբել անդամներին, իրենց երկրներում դարձնելու նրանց ժողովրդավարացման, որոշումների նոր ուղիների որոնման ջատագովներ: Ասոցիացիայի նպատակը քաղաքացիական հասարակությունների ներսում արագ արձագանքման մեխանիզմների մշակումն է, նրանց ազգային եւ համաաշխարհային գործընթացներին մասնակից դարձնելը: Ասոցիացիան քաջալերում է ՏՄԽ-ների ստեղծումը՝

ջանալով իր լուսնային ունենալ համաշխարհային առաջընթացի, տնտեսական զարգացման եւ ժողովրդավար հասարակությունների տրանսֆորմացիայի գործում աշխատանքային փորձի փոխանակման, հանդիպումների կազմակերպման միջոցով: Արձանագրենք, որ եթե 1989թ. աշխարհում գործում էին ընդամենը 15 ՏՄՄ-ներ, ապա այսօր դրանց թիվն անցնում է 70-ից, որից 56-ը այս Ասոցիացիայի անդամներ են:

Եթե վերլուծելու լինենք Ասոցիացիայի նպատակները, ապա պետք է նախ եւ առաջ նկատել, որ դրանք շատ լայնիմաստ են ու կարող են ընդգրկել բազմաթիվ եւ բազմաբնույթ գործողություններ: Կարծում եմ՝ նպատակների այսպիսի “անորոշության” պատճառը նախ եւ առաջ Ասոցիացիայի մեջ ընդգրկված բազմասպեկտր անդամներն են: Չնայած նրան, որ նրանցից յուրաքանչյուրը կհստում է ընդհանուր արժեքներ եւ նպատակներ Ասոցիացիային անդամակից մյուս կազմակերպությունների հետ, այնուամենայնիվ առանձին-առանձին այս կառույցները տարբերվում են միմյանցից թե՛ կառուցվածքով, թե՛ առաքելությամբ, թե՛ անվանումով, թե՛ շարժառիթներով եւ թե՛ մայր-երկրներում իրենց նշանակությամբ, եւ դրանց միավորումը մեկ ընդհանուր “անձրեւանոցի տակ” պահանջում է այնպիսի հարթության ստեղծումը, որը կապահովի զարգացող եւ զարգացած երկրների ՏՄՄ-ների համատեղ արդյունավետ աշխատանքը:

Կարծում եմ՝ Ասոցիացիայի նպատակների եւ գործողությունների շարադրման այսպիսի ձեւաչափը անդամ-պետություններին աշխատանքի եւ երկուստեք համագործակցության շատ ավելի լայն դաշտ կտա եւ չի նեղացնի դրանց հնարավորությունների շրջանակը: Ավելին՝ այն աշխարհի երկրների համընդհանուր եւ հաստատուն զարգացման եւ ներդաշնակ ապագայի տեսլականն է պարունակում իր մեջ:

Վերոնշյալը դիտարկմանն ի ապացույց՝ արձանագրենք, որ միջազգային այս ասոցիացիան իր կազմավորումից ի վեր փորձել է ընտրել գլոբալիզացիայի, տնտեսական եւ սոցիալական զարգացմանն ուղղված համալիր խնդիրներ, որը թույլ կտա ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների կողմից ներկայացված խորհուրդներին մասնակիցը դառնալ թեմաների քննարկումներին եւ կառուցողական դեր ունենալ կառույցի աշխատանքներում: Մա ապացուցում է Ասոցիացիայի այն դրույթը, որ ժամանակակից տնտեսական եւ սոցիալական խնդիրները սահմաններ չեն ճանաչում եւ հաճախ ունեն համաշխարհային կարելիություն:

ՏՄՄՄ-ի կողմից քննարկվող խնդիրները ներառում են կայուն զարգացումը, կլիմայական փոփոխությունները, աշխատանքների կայունության ապահովումը, գենդերային խնդիրները, ՄԱԿ-ի Հազարամյակների զարգացման նպատակների (Millennium Development Goals – MDGs) սատարումը եւ այլն: Յուրաքանչյուր տարի Ասոցիացիայի Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ կազմակերպության համար ընտրվում է աշխատանքային թեմա (տե՛ս աղյուսակ 1), իսկ Գլխավոր քարտուղարությունը ապահովում է բոլոր մայրցամաքներից, զարգացման բոլոր մակարդակներում գտնվող կողմերի մասնակցությունը տվյալ խնդրի աշխատանքներին:

Տես՝ աղյուսակ 1

ՏԱԲԻ, ՎՍՅԸ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՄԱ	
2000 Լիբերիա	Համաշխարհային առևտրի գլոբալիզացումը եւ դրա հետեւանքները	

	<i>Globalization of world trade and its consequences</i>	
2001 Հաագա	Գլոբալիզացիայի հետևանքները ամենաաղքատ պետություններում” <i>The consequences of globalisation on the poorest countries”</i>	Mr. Herman H. F. WIJFFELS, President of the Economic and Social Council of the Netherlands,
2002 Բուխարեստ	Սոցիալական և տնտեսական երկխոսության հարաբերակցությունը փոխանակումների գլոբալիզացիայի հետ <i>Social and economic dialogue in relation with globalization of exchanges</i>	
2003 Ալժիր	Աղքատության դեմ պայքարը կայուն զարգացման ճանապարհով. ուղի դեպի գործընկերական մոտեցում <i>Fighting poverty through sustainable development : towards a partnership approach</i>	Mr. Mohamed Salah MENTOURI, Chairman of the Economic and Social Council of Algeria
2004 Ժնև	Գլոբալիզացիայի սոցիալական կողմը <i>Report on the social dimension of globalization</i>	
	Սոցիալական երկխոսության համաշխարհային զարգացումը <i>The world-wide development of social dialogue</i>	
2005 Փարիզ	Առևտրի գլոբալիզացիան՝ ի շահ բոլորի. քաղաքացիական հասարակության դերը այս նպատակի իրականացման գործում <i>Globalization of trade for the benefit of all. What role can organized civil society play ?</i>	Mr. Jacques DERMAGNE, President of the French Economic and Social Council
	Կանանց կարգավիճակը <i>Status of women</i>	
2006 Սեուլ	<i>Չարգացմանն ուղղված միջազգային նոր միջոցները և աղքատության դեմ պայքարը</i> <i>New international resources for Development and fight against poverty</i>	
	<i>Արդյունավետ աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա</i> <i>Creating an environment conducive to generating decent and productive employment and its impact on sustainable development</i> ¹	
2007 Պեկին	Միջազգային համագործակցության ինտենսիվացում. համատեղ զարգացման և ներդաշնակ աշխարհի կառուցման խթանումը <i>Intensifying International Cooperation ; Promoting joint Development and Building a Harmonious World</i>	Mr. WANG Zhongyu, President of the Chinese Economic and Social Council
2009 Բրազիլիա	Զարգացում՝ հավասարության և շրջակա միջավայրի պատասխանատվության լույսի ներքո <i>Development with equity and environmental responsibility”</i>	Mr. Walfrido dos MARES GUIA, Responsible for the Brazilian Council for Economic and Social Development
2010-2011	SUԽ-ների դերը նոր համաշխարհային տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի կառավարման	

¹ Սա Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) 2006թ. հիմնական թեման էր

Թեման առաջարկվում է նախագահող երկրի կողմից, որն առաջին հերթին հաստատվում է ՏՄԽՄԱ-ի Խորհուրդի կողմից, որից հետո արդեն անդամ պետությունների ՏՄԽ-ներից յուրաքանչյուրը իրավասու է իր ներդրումն ունենալ եւ իր եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնել առաջարկված թեմայի վերաբերյալ:

Այս թեմաներից յուրաքանչյուրի քննարկման համար կազմվում են աշխատանքային հետազոտական խմբեր, որոնք բաղկացած են կամավորության սկզբունքով կազմված 10-12 անդամներից: Այդ խմբերում ընդգրկվում են բոլոր մայրցամաքները ներկայացնող խորհուրդները ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներից: Մինչև կոնսենսուսի հասնելն ու եզրակացությունների հանգելը այս խմբերը 2-3 հանդիպումներ են անցկացնում: Դրան զուգահեռ, յուրաքանչյուր անդամ-խորհուրդ կարող է իր երկրի համատեքստում քննարկել հայտարարված թեման եւ հանդես գալ իր առաջարկություններով: Որպես կանոն, նախագահող պետության ՏՄԽ-ի նախագահը ընտրվում է որպես ստեղծված հանձնաժողովի գլխավոր համակարգող, ով պարտավոր է սինթեզել բուն հանձնաժողովի եւ մյուս անդամ-ՏՄԽ-ների եզրակացությունները եւ հանդես գալ մեկ ընդհանուր փաստաթղթով: Իսկ արդեն ընդունված փաստաթուղթը ներկայացվում է Գլխավոր ասամբլեային զեկուցող կողմից (reporter):

Այս ձեւաչափի առաջնային նպատակը կառույցի շրջանակներում ընթացող գործընթացներին անդամ-խորհուրդներին, ինչպես նաեւ յուրաքանչյուր հետազոտական խմբին մասնակից դարձնելն է: Նպատակը, կարծում եմ, մեկն է՝ ապահովել տեղեկացվածության բարձր մակարդակը, ծանոթանալ բոլոր անդամների դիրքորոշումներին եւ խթանել անդամ-խորհուրդների ակտիվ մասնակցությունը այս կամ այն նախաձեռնությանը: Իսկ զարգացած եւ զարգացող երկրների ՏՄԽ-ների միջեւ այսպիսի համագործակցությունը հնարավորություն կտա լավագույն աշխատանքային փորձի տարածումն ու ընդօրինակումը:

Իսկ եթե ավելի գլոբալ դիտարկենք, ապա այս կառույցը ջանքեր է գործադրում նոր միջազգային Ինստիտուտի ձեւավորման, համերաշխության նոր որակի ձեռքբերման համար, որը հիմնված չի լինի գուտ քաղաքական շահի վրա (մի բան, որի ականատեսն ենք այժմ), այլ կլրի քաղաքացիական հասարակության, տնտեսական եւ սոցիալական սեկտորների ազդեցությունը, փորձն ու վերլուծությունը:

Երկխոսության եւ հետադարձ կապի ապահովման համար ՏՄԽՄԱ-ն հրատարակում է տարեգրքեր, որոնք պարունակում են յուրաքանչյուր անդամի կառուցվածքի, առաքելության եւ աշխատանքների մասին մանրամասն տեղեկատվություն:

Երկու տարին մեկ գումարվող Միջազգային հանդիպումներին պատրաստվելու գործընթացում ՏՄԽՄԱ-ն փորձում է համաձայնեցնել տնտեսական-սոցիալական մեկ-երկու կարեւորագույն թեմաներ բոլոր խորհուրդների հետ:

ՏՄԽՄԱ-ի բյուջեն հիմնականում համալրվում է անդամ-կառույցների ներդրումների արդյունքում: Նվազագույն տարեկան ներդրումը կազմում է 1500 եվրո: Ֆրանսիայի տնտեսական եւ սոցիալական խորհուրդը հոգում է գործադիր քարտուղարության ծախսերի մեծ մասը, որը հենց Փարիզում է տեղակայված, ըստ երեւոյթին, հենց այդ պատճառով: Ասոցիացիան նաեւ որոշակի սուբսիդավորում է ստանում որոշ պաշտամենտներից եւ

կառավարություններից, ինչպես նաև որոշ ՏՄԽ-ներից: Սակայն այլ միջազգային դոնոր կազմակերպություններից կամ միջպետական կառույցներից կառույցը ֆինանսավորում չի ստանում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ասոցիացիայի՝ վերջին տարիների տարեկան զեկույցների ու հոշակագրերի բովանդակության ուսումնասիրությունը հնարավորություն կտա գաղափար կազմել դրա ամբողջական գործունեության մասին, վերլուծել կատարված աշխատանքների իրական ձգտումները, թիրախային կետերը, կուլիսյան շարժառիթները, որի արդյունքում կփորձեմ հասկանալ ՀՀ ՀԽ-ի անդամակցության պոտենցիալ դիվիդենդներն ու բացվող հնարավորությունները: Այդ պատճառով ստորեւ ներկայացվել են 2006, 2008 եւ 2009թթ. տարեկան հաշվետվությունների հիմնական դրույթները:

- *Զարգացմանն ուղղված միջազգային նոր միջոցները եւ աղքատության դեմ պայքարը (New international resources for development and fight against poverty) Մեուլ, 2006*

Այս զեկույցում ՏՄԽՄԱ անդամ-խորհուրդները ներկայացրել են “աղքատության դեմ պայքար” եւ “զարգացում” հասկացությունների տարբերությունները, որոնք չնայած անմիջականորեն կապ ունեն միմյանց հետ, սակայն դրանք նույնացնել եւ դիտել նույն ձեւաչափի ներքո չի կարելի: Զեկույցի գլխավոր թեզն այն է, որ “զարգացման համար” նախատեսվող գումարները չպետք է ուղղվեն աղքատության դեմ պայքարին: Սակայն միեւնույն ժամանակ զարգացումը խթանելու համար նախ պետք է վերացնել աղքատությունը, որպեսզի “ռեցեպիենտները” կարողանան ստանալ օգնությունը համանման արդյունավետ ձեւով: Հետեւաբար ՏՄԽՄԱ-ի անդամները հանգում են եզրակացության, որ հավելյալ ֆինանսական միջոցներ են հարկավոր, որի մեջ զարգացած երկրների լուծման ահռելի է: Փորձ է արվում բացատրել, որ զարգացած երկրների օգնության տրամադրումը (այդ երկրների ՀՆԱ-ի 0.7% չափով) հենց նրանց շահերից է բխում, քանի որ համերաշխության եւ միասնության գաղափարներից գատ՝ դա ամբողջ մարդկության հիմնարար եւ հիմնական հետաքրքրության ոլորտն է:

Այսպես իր ուսումնասիրությունում ՏՄԽՄԱ-ն հանդես է գալիս մի շարք եզրակացություններով, որոնք փորձել են դասակարգել ըստ դերակատարների:

ա) Զարգացած երկրների խորհուրդները պետք է խորհրդատվական դերակատարում ստանան օրենսդիր եւ գործադիր մարմինների համապատասխան կառույցների հետ՝ ստիպելով նրանց նախ միջոցներ տրամադրել հանրային զարգացման օգնության եւ, որ ավելի կարեւոր է, նոր ֆինանսական աղբյուրների հայթայթման, արդյունավետ օրենսդրական դաշտի զարգացման, անհավասարության մասին իրազեկության մակարդակի բարձրացման համար:

բ) Ցածր կենսամակարդակ ունեցող երկրներում գործող ՏՄԽ-ները պետք է փորձառական ճանապարհով բարելավեն կառավարման համակարգը իրենց երկրներում: Այսպես՝ կարճաժամկետ ռազմավարություն եւ ծրագրեր մշակել աղքատության նվազեցման համար, համագործակցել “փորձառու” երկրների հետ ֆինանսական նոր միջոցների ձեռքբերման ուղղությամբ, պարբերաբար մոնիթորինգներ կազմակերպել՝ գնահատելու համար արտաքին միջոցներով իրականացվող ծրագրերի արդյունավետությունը:

գ) Բոլոր ՏՄԽ-ները, այդ թվում ՏՄԽՄԱ-ին անդամակցող ՏՄԽ-ները պետք է ջանքեր գործադրեն յուրաքանչյուր երկրում օրենսդիր մարմնի դերի մեծացման, ծրագրերի թափանցիկ եւ արդյունավետ իրականացման, գնահատման մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Ի հավելումս սրա՝ որպես խորհրդատվություն՝ նշվում էր նաեւ պետությունների կառավարությունների, միջազգային կազմակերպությունների հետ երկրների կառավարությունների համագործակցության խթանումը: Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովը (European economic and social committee) պետք է նույն գործունեությունը ծավալի Եվրոպական Միության հանձնաժողովի եւ անդամ երկրների կառավարությունների հետ:

դ) Հենց ինքը՝ ՏՄԽՄԱ-ն, պետք է փոխանցի աշխատանքի արդյունքները ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովին, աջակցի Ֆրանսիայի ՏՄԽ-ի կողմից սերտ հարաբերությունների հաստատմանը 2006թ. ստեղծված Մոնիթորական խմբի հետ:

- *Միջազգային համագործակցության ինտենսիվացում. համատեղ զարգացում եւ ներդաշնակ աշխարհի կառուցում (Intensifying International Cooperation; Promoting joint Development and Building a Harmonious World) Միջազգային հանդիպման 10-րդ համագումար, Պեկին, 2008*

2007թ. առաջարկված թեման բաղկացած է երեք առանձին ենթաթեմաներից, որոնք միեւնույն ժամանակ անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Այս գեկույցը այդ ենթաթեմաներից յուրաքանչյուրը քննարկում է իրենից բխող դրույթների համատեքստում, որի արդյունքում հանդես է գալիս եզրակացություններով եւ առաջարկություններով:

Առաջին հայացքից տարօրինակ է հնչում “Միջազգային համագործակցության ինտենսիվացում” արտահայտությունը, քանի որ այսօր աշխարհը թեւակոխել է տեղեկատվական, ֆինանսական հոսքերի, էներգետիկ, տեխնոլոգիական եւ մարդկային ռեսուրսների շարժի մարդկային պատմության մեջ ամենաաներեւակայելի փուլը, եւ, թվում է, այլեւս չկա որեւէ հնարավորություն այս հարաբերությունների հավելյալ ընդլայնման համար: Սակայն այս համատեքստում պետք է նշել, որ գլոբալիզացիան դարձել է “անկառավարելի”, եւ դրական արդյունքներին զուգահեռ՝ այն առաջ է բերել մի շարք անցանկալի հետեւանքներ: Անհրաժեշտ են կարգավորման մեխանիզմներ, միջազգային համագործակցություն քաղաքական մակարդակում, որոնք երեւան են գալիս մի շարք պահանջներին ի պատասխան: Այսպիսով՝ առաջարկվում էր մի շարք չափորոշիչների ներդրում՝

գլոբալիզացիայի “բացասական հետեւանքները” նվազեցնելու, մշակույթների ու մարդկանց ինքնության պաշտպանության եւ արդյունավետության բարձրացման համար: Այստեղ շեշտը դրվում է գլոբալիզացիայի լուրջագման կամ տեղայնացման վրա, ուժեղացնելով տեղական առեւտրային շուկաները, խթանելով հավասարությունը՝ սոցապահովության եւ գլխավոր աշխատանքային ստանդարտների պահպանման ճանապարհով եւ վերագնահատելով համաշխարհային կառավարման մեխանիզմները աճի եւ աշխատանքի գործառույթների համատեքստում:

Այս մեխանիզմների ներդրումը եւ դրանց արդյունավետ կիրառությունը հնարավոր է միայն միջազգային համագործակցության, բազմակողմ ինստիտուտների միջեւ կոորդինացիայի ավելացման արդյունքում, որի հետեւանքով հնարավոր կլինի գլոբալ կառավարման հիմքերը սահմանել, որի հաստատման համար կան հստակ նախապայմաններ: Չնայած նրան, որ գաղափարը բավական ուտոպիստական է, այնուամենայնիվ հավելյալ խթան է տարածաշրջանային համագործակցության վերասահմանման, տարածաշրջանային համերաշխության հաստատման համար:

Զարգացումը այս համատեքստում ընկալվում է սոցիալական եւ տնտեսական գործոնների, արժեքների բազմազանության, հավասար հնարավորությունների ընձեռման տեսանկյունից, քանի որ կայուն մարդկային զարգացման տեսլականը իրականություն պետք է դառնա տնտեսական, սոցիալական եւ շրջակա միջավայրի պահպանության գործոնների համատեղ աշխատանքի արդյունքում: Այսպիսով՝ առանձնացվում են տնտեսական աճի եւ սոցիալական առաջընթացի 4 հիմնական մարտահրավերները՝ կրթությունը, առողջապահությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը եւ կանանց լիազորությունների ընդլայնումը:

Կարծում եմ՝ ավելորդ է մանրամասնել այս չորս գործոնների կարեւորությունը հասարակության հավասարաչափ եւ կայուն զարգացման գործում, քանի որ դրանք համաշխարհայնորեն ընդունված արժեքներ են, որոնց խթանումը անխոս կհանգեցնի համաշխարհային զարգացման մակարդակի ավելացմանը: Սակայն չեն նշվում կոնկրետ մեխանիզմներ, չեն քննարկվում տարբեր ռազմավարություններ, չեն մասնավորեցվում եւ տեղայնացվում գործնական ծրագրեր, այլ արձանագրվում են փաստերը, բացատրվում դրանց կարեւորությունը հասարակության առաջընթացի տեսակետից եւ կատարվում տրիվիալ եզրակացություններ՝ խթանել այդ արժեքների տարածումը:

Համաձայն զեկույցի՝ համատեղ զարգացմանն ուղղված օգնության ծրագրերի տեսակները տարբեր են եւ առաջ են բերում բավականին լուրջ հակասություն: Այստեղ նախանշվում են երկու առանձին ուղղություններ՝ միջազգային կազմակերպությունների ու պետությունների կառավարությունների կողմից իջեցվող օգնություն եւ կառույցներ, որոնք առանց երկրի իշխանություններին դիմելու ուղղակի կապ են հաստատում տվյալ մարմնի հետ՝ ակնկալելով վերջնական շահառուների հետ փոխհարաբերությունները:

Այս երկկողմ համագործակցության տեսակը կիրառելի է առանձին ռազմավարական ոլորտներում (կրթություն, առողջապահություն) իրականացվող հանրային ծրագրերի իրականացման նպատակով, երբ բազմակողմ մեթոդը ավելի նախընտրելի է համատեղ զարգացման նպատակի համար:

Ինչ վերաբերում է “ներդաշնակ աշխարհի կառուցում” եզրույթին, ապա այն քննարկվում է մի քանի հարթություններում եւ տարբեր SUԽ-ների կողմից մեկնաբանվում է յուրովի: Այսպես՝ Չինաստանի SUԽ-ն այս դրույթը կապում է տնտեսական զարգացման,

սոցիալական հավասարության խթանման, կենսական ստանդարտների բարելավման հետ: Մենեգալի ՏՄԽ-ի մեկնաբանության մեջ առանձնացվում է սոցիալական միջնորդությունը՝ որպես հակամարտության գոտիներում հարաբերվելու միակ ճիշտ ուղի: Սակայն բոլոր առաջարկները հատվում են մեկ կետում, այն է՝ կայուն զարգացման խթանումը, որը նախատեսում է *հարատև բարգավաճում-զարգացում* չկենտրոնանալով միայն տնտեսական ցուցանիշների վրա, քանի որ, լինելով անհրաժեշտ պայման, միայն դրա գոյությունը չի ապահովում հարատև բարեկեցիկ կյանքը:

- *Չարգացում՝ հավասարության եւ շրջակա միջավայրի պատասխանատվության լույսի ներքո (Development with Equity and Environmental Responsibility) Բուդապեշտ, 2009*

Բրազիլիայի ՏՄԽ-ի նախագահության շրջանում “Չարգացում՝ հավասարության եւ շրջակա միջավայրի պատասխանատվության լույսի ներքո” թեման հաստատվեց որպես երկամյա աշխատանքային: Այս թեմայի ներքո քննարկվում են էներգետիկայի, դրա զարգացման եւ շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության հետ կապված խնդիրները: Էներգետիկ միջոցների սակավության եւ դրանց ոչ կայուն գների պարագայում այլընտրանքների ձեռքբերումը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար օրհասական խնդիր է: Այս համատեքստում քաղաքացիական հասարակությունը դիտվում է իբրև օղակ, որը կարող է հանդես գալ որպես միջնորդ-դատավոր, հետևաբար ՏՄԽՄԱ-ն իրեն համարում է այս համաշխարհային կարեւորագույն գործընթացներից մեկի կենտրոնական դերակատարներից մեկը: Ըստ ՏՄԽՄԱ-ի անդամ-կառույցների՝ “Չարգացում՝ հավասարության եւ շրջակա միջավայրի պատասխանատվության լույսի ներքո” հայեցակարգը սահմանվում է ամբողջանում է մի քանի տարրերի առկայության դեպքում միայն: Դրանք են կայուն զարգացումը (սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի ոլորտներում), կրթությունն ու թրեյնինգները, ազգային եւ տեղական հանրային կայացած ինստիտուտները, որոնք կոչված են ուղղորդելու եւ կոորդինացնելու զարգացման կայուն ձեւաչափը եւ, իհարկե, սոցիալական երկխոսությունն ու համագործակցությունը:

Այս թեման զեկույցում քննարկվում էր համաշխարհային ֆինանսական ճգնաժամի համատեքստում՝ ընդգծելով վերջինիս ազդեցությունը մարդկանց բարօրության վրա եւ շեշտելով նոր աշխարհակարգի որդեգրման պահանջը: Չեկույցի վերջում Ասոցիացիան հանդես է գալիս նախօրոք համաձայնեցված 5 կետերի վերաբերյալ եզրակացություններով, որոնք են՝ 1. կայունությունը եւ զարգացման նախապատվությունները, 2. Հանրության համար սննդի ապահովումը, 3. Էներգետիկ խնդիրները, 4. Տեխնոլոգիական վերազինումը, 5. Չարգացման մոդելների տնտեսական, սոցիալական եւ շրջակա միջավայրի ազդեցության մոնիթորինգը:

Սակայն ինչպես այս ենթաոլորտները, այնպես էլ դրանց վերաբերյալ շարադրված եզրակացությունները շատ լայնիմաստ եւ, որ ավելի կարեւոր է, որեւէ կոնկրետ գործողություն չնախատեսող հայեցակարգային դրույթներ են. հստակ գործողությունների պլան, ֆինանսական հատկացումներ եւ այդ ոլորտով զբաղվող մարմին կամ պատասխանատու չկա:

- *2008-2009թթ. Ասոցիացիայի ծավալած աշխատանքները*

2008-2009թթ. Բրազիլիայի եւ Հունգարիայի նախագահության ընթացքում Ասոցիացիան իր ներդրումն ունեցավ Աշխատանքի միջազգային կազմակերպության 2009թ. հուլիսին Ժնևում կայացած “Գենդերային հավասարությունը աշխատանքում եւ դրա հետեւանքները աշխատանքի եւ սոցիալական ստանդարտների վրա” համաժողովում, 2009թ. Ժնևում ՄԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական խորհրդի կազմակերպած Հանրային առողջապահությանը նվիրված համաժողովում, որտեղ իր ներկայացրած զեկույցում ընդգծվում էր առողջապահության կարելությունը, ներկայացվում էր վիճակագրությունը, նկարագրվում էին առողջապահության գլոբալ վիճակը եւ դրա բարելավմանն ուղղված հնարավոր գործընթացները:

SUIFUA-ն մասնավորապես ընդգծում էր առողջապահության զարգացման գլոբալ ռազմավարության ստեղծման մասին թեզը, առաջարկում էր բոլոր երկրների կառավարություններին ոլորտի զարգացման համար հատկացվող ֆինանսական միջոցները հասցնել բյուջեի 15%, որը կխթաներ առողջապահության զարգացման ազգային ծրագրերը: Համաձայն զեկույցի՝ բոլոր շահառու կողմերը՝ իշխանությունները, մասնավոր սեկտորը, քաղաքացիական հասարակությունը, անհատները եւ միջազգային հանրությունը, պետք է ներդնեն իրենց բոլոր ուժերը՝ թիրախային նպատակներին հասնելու համար: Ասոցիացիան վերջնական հաշվով դիմում էր պետություններին՝ իրենց ֆինանսական աջակցությունն ունենալու համար:

- *Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների դերը նոր համաշխարհային տնտեսական, սոցիալական եւ շրջակա միջավայրի կառավարման համատեքստում (The views and role of Economic and Social Councils in the new economic, social and environmental governance at a global level) 2009-2010թթ.*

Բուդապեշտում 2009թ. հուլիսին կայացած միջազգային համաժողովի ընթացքում Տնտեսական եւ Սոցիալական խորհուրդների միջազգային ասոցիացիայի Գլխավոր Ասամբլեան կազմեց միջնաժամկետ աշխատանքային խումբ «Տնտեսական եւ սոցիալական խորհուրդների եւ համանման կառույցների դերը նոր համաշխարհային տնտեսական, սոցիալական եւ շրջակա միջավայրի կառավարման համատեքստում» թեմայի աշխատանքների համար:

2009-2010թթ. աշխատանքային թեմայի շրջանակներում առանձնացվել են չորս գլխավոր ոլորտներ եւ համապատասխան աշխատանքային խմբեր՝

- 1 գլոբալիզացիան եւ աշխատանքի շուկաները,
- 2 ՀՆԱ ցուցանիշներին համալրող զարգացման նոր ինդիկատորները,
- 3 զարգացում եւ շրջակա միջավայրի կայունություն,
- 4 SUIFUA-ների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, կառավարությունների, պառլամենտների ու միջազգային կառույցների կողմից ստեղծված ասոցիացիաների դերի ավելացում գլոբալիզացիայի կառավարումը բարելավելու նպատակով:

Պարտադիր չէ, որ SUIFUA-ի անդամ յուրաքանչյուր SUIFUA քննարկի բոլոր առանձնացված ենթաթեմաները, այն կարող է կենտրոնանալ իր երկրում առկա խնդրահարույց հարցերի վրա միայն:

Առաջին ենթաթեմայի վերաբերյալ ՏՄԽ-ն փորձում է կազմել իր երկրում աշխատանքային շուկաների բնութագրերը, ինչպես նաև գլոբալիզացիայի ազդեցությունը իրենց աշխատանքային շուկաների վրա: Այս վերլուծության արդյունքում երեւան են գալիս այն թույլ օղակները, ինչպես նաև զուգահեռաբար առանձնացվում այն կետերը, որտեղ ՏՄԽ-ն կարող է հստակ դերակատարում ունենալ եւ քայլեր ձեռնարկել գլոբալիզացիայի արդյունքում աշխատանքային շուկաներին հասցվող վնասը նվազեցնելու համար: Այսպիսով՝ լուծումներ որոնելու ճանապարհին ՏՄԽ-ն, գնահատելով իր ներուժը, առանձնացնում է կարճաժամկետ եւ երկարաժամկետ պլաններ՝ այդպիսով հստակ ժամանակացույց սահմանելով իր ստանձնած պարտավորությունների վրա:

ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ՏՄԽՄԱ-ի գործունեության մյուս կարեւոր վեկտորը դա միջազգային այլ կազմակերպությունների, դրանց առանձին մարմինների հետ լայնամասշտաբ համագործակցությունն է: Անդամ-խորհուրդների հետ աշխատանքին զուգահեռ՝ Ասոցիացիան զարգացնում է սերտ հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ, ընդհուպ մինչև նպատակների ու գործողությունների համադրումը, հանգամանք, որը կառույցի կողմից իրականացրած աշխատանքներին ավելի մեծ հեղինակություն է տալիս, բարձրացնում արդյունավետության մակարդակը, հանգեցնում շահառուների ավելի լայն սպեկտրի ներառմանը, ֆինանսական հնարավոր աղբյուրների բազմապատկմանն ու աշխատանքային փորձի փոխանակմանը:

- *ՏՄԽՄԱ-ն եւ ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհուրդը (ECOSOC)*

Այս երկու կառույցների միջև հարաբերությունները մշտապես միտում ունեն սերտանալու եւ ընդլայնվելու՝ ձգտելով հնարավորինս արդյունավետ քաղաքացիական հասարակության կարծիքը լսելի դարձնել իշխանական օղակներում: Ընդհանուր առմամբ, ՏՄԽՄԱ-ի եւ նրա անդամների գործողությունները գրեթե ամբողջապես համընկնում են ՄԱԿ-ի կողմից հռչակված տնտեսական, սոցիալական եւ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված նպատակներին՝ ունենալով իրենց ներդրումը ՄԱԿ-ի ստրատեգիական քաղաքականության գործում:

Դրա ապացույցն է նախելառաջ այն, որ 2000թ.-ից ի վեր ՏՄԽՄԱ-ի ընդունած ամենամյա թեման գրեթե կրկնում է ՄԱԿ-ի ՏՄԽ-ի որդեգրած ոլորտը եւ վերջինիս լիազումար նիստի ժամանակ հանդես է գալիս իր տեսակետով: Այս նախաձեռնության շնորհիվ բոլոր մայրցամաքների ՏՄԽ-ները հնարավորություն ունեն դիտորդի կարգավիճակով մասնակիցը լինել Նյու Յորքում Հանձնաժողովի աշխատանքներին: Ի հավելումս՝ սա հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին տարածել համաշխարհային մարտահրավերների դեմ ուղղված ՄԱԿ-ի որդեգրած քայլերը:

2001թ. որոշման համաձայն՝ ՏՄԽՄԱ-ն մշտական դիտորդի դեր է զբաղեցնում ՄԱԿ-ի ՏՄԽ-ում եւ լիովին ընդգրկված է վերջինիս աշխատանքների մեջ՝ դառնալով նրա գլխավոր գործընկերն ու համախոհը: Այսուհետ կազմակերպությունը մշտական հիմունքներով մասնակցում է իր գործունեությանը հարող ՄԱԿ-ի ՏՄԽ-ի աշխատանքներին, սակայն առանց ձայնի իրավունքի:

Ներկայումս ՏՄԽՄԱ-ն սեփական կազմակերպության ընդլայնման եւ զարգացման երկրորդ փուլի մշակման աշխատանքներն է կատարում, որտեղ կենտրոնական դերը պատկանում է միջազգային կազմակերպություններին եւ նրանց հետ Ասոցիացիայի հարաբերությունների հնարավորինս սերտացմանը:

Այս նպատակը, կարծում եմ, ենթադրում է տարբեր հարթություններում ծավալվող ՏՄԽՄԱ-ՄԱԿ-ի ՏՄԽ հարաբերություններ: Դրա համար նախ անհրաժեշտ է մեծացնել ՏՄԽՄԱ-ի ներդրումը ՄԱԿ-ի ՏՄԽ-ի աշխատանքներին, փորձել ամեն կերպ համադրել առաջիկա քննարկվելիք թեմաները, ընդհուպ մինչեւ օրակարգային դրոյթների համընկնում: Բացի դրանից, կարծում եմ, ՏՄԽՄԱ-ն պետք է հարաբերություններ զարգացնի ՄԱԿ-ի ՏՄԽ-ի առանձին ֆունկցիոնալ հանձնաժողովների, փորձագիտական խմբերի հետ, որն ավտոմատ կերպով կներքաշի կառույցին ՄԱԿ-ի կուլիսային կարեւորագույն հարցերի որոշման գործընթացի մեջ: Ի հավելումս՝ ՏՄԽՄԱ-ն կարող է միջնորդ հանդիսանալ անդամ ՏՄԽ-ների եւ ՄԱԿ-ի ՏՄԽ-ի միջեւ, քանի որ վերջինս չունի ազգային ներկայացուցչություններ՝ ի դեմս ՏՄԽ-ների, մաս դառնալ ՄԱԿ-ի խաղաղության պահպանման հանձնաժողովի (Peacebuilding Commission –PBC) աշխատանքներին: Այսպիսի համալիր մոտեցումը ժամանակի ընթացքում թույլ կտա ՏՄԽՄԱ-ին ներգրավվել նաեւ ՄԱԿ-ի այլ կառույցների գործունեության մեջ:

- *ՄԱԿ-ի Հազարամյակների զարգացման նպատակներին (MDGs) ուղղված գործունեությունը*

Հազարամյակների զարգացման նպատակները կառույցի ընդհանուր քաղաքականության, իրականացվող գործունեության կենտրոնական տեղում են գտնվում: Ասոցիացիան ոչ միայն կիսում է ՄԱԿ-ի կողմից հռչակված ՀԶ նպատակներն ու գաղափարները, այլեւ անմիջական մասնակիցն ու աջակիցն է դրանց մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման, տարածման, նպատակների գործնական կիրառման համար: Ասոցիացիան իր անդամների, ակադեմիական, կրթական կառույցների ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով աշխատում է այս գլոբալ նպատակների իրականացման գործում իր լուրման ներդնելու համար:

Այս նպատակին էին ծառայում 2006թ.-ին Ալժիրում, Պեկինում, Բրազիլիայում եւ Փարիզում անցկացված 4 տարածաշրջանային կլոր սեղանները, որոնց արդյունքում հստակ նախագիծ մշակվեց, այն է՝ կրթության, թրեյնինգների, լոբբինգի միջոցով խթանել ՀԶՆ-ների գաղափարների տարածումը: Ծրագիրը նախատեսում էր ժնեում ՀԶՆ թրեյներների համար «Գերազանցության միջազգային կենտրոնի (International Centre of Excellence) ստեղծումը, ինչպես նաև անմիջական կապի եւ սերտ համագործակցության ապահովում տարածաշրջանային նույնանուն կենտրոնների հետ, որոնք, ըստ կլոր սեղանների արդյունքների, պետք է ստեղծվեին չորս մայրցամաքներում:

ՀԶՆ-ի քաջալերման ճանապարհին մյուս նախաձեռնությունը ՄԱԿ-ի IRENE ՀԿ-ի (UN NGO IRENE) հետ համատեղ SUՄՄԱ-ն «հազարամյակների զարգացման նպատակներ» մրցանակաբաշխության անցկացումն էր, որը նպատակ ուներ օժանդակել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ հանրային ինստիտուտների շրջանում հազարամյակների զարգացման նպատակների տառին եւ ոգուն համահունչ ծրագրերի նախաձեռնումը: 2007թ. Հազարամյակների զարգացման երկրորդ նպատակի, այն է՝ «Հասնել տարրական կրթության համընդհանուր տարածմանը» թեմայով առաջին մրցանակը շնորհվեց Կոտ դ'Իվուարի, Մալիի տնտեսական եւ սոցիալական խորհուրդներին (SUՄ), Արգենտինայի ՀԿ-ներից մեկին եւ Կորեական մի կազմակերպության:

Երկրորդ ՀԶՆ մրցանակաբաշխությունը նախատեսվում է անցկացնել 2010թ.-ին, որը նվիրված է երրորդ ՀԶՆ-ին, այն է՝ «Գենդերային հավասարություն եւ կանանց իրավունքներ» թեմայով գործունեության ծավալումը՝ որպես թիրախային խմբեր դիտելով կրթական հաստատությունները: Այսպիսով՝ համալսարանները, որոնք իրենց կրթական ծրագրերը կազմում են հաշվի առնելով վերոհիշյալ համընդհանուր նպատակը եւ SUՄ-ների, ՀԿ-ների հետ համագործակցության փորձ ունեն, հավակնում են այս մրցանակին:

SUՄՄԱ-ի ջանքերով կազմակերպած այս մրցանակաբաշխության մոդելը հավելյալ ազդակներ է հաղորդում թիրախային խմբերին, նրանց շրջանում խթանում ՀԶՆ-ներին համահունչ նորարարական գործողությունների ծավալումը եւ այդ հասարակությունների ներսում ՀԶՆ գաղափարների տարածումը:

Պատմական ժառանգության բերումով՝ Աֆրիկայի պետություններից շատերում կան SUՄ-ներ, սակայն ինստիտուցիոնալ եւ ֆինանսական միջոցների պակասը սահմանափակում է նրանց ամբողջական գործունեության ծավալումը: Չնայած մայրցամաքում գործում է առանձին Աֆրիկյան Տնտեսական եւ Սոցիալական խորհուրդների ասոցիացիան (USUՄԱ), սակայն նրանք հազվադեպ են աշխատանքային հանդիպումներ ունենում: Աֆրիկյան SUՄ-ներին ավելի լայն հնարավորություններ եւ փորձի փոխանակման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելու նպատակով ՄԱԿ-ը, SUՄՄԱ-ի հետ համատեղ, 2009թ.-ին Աֆրիկայում սկսեց «Ազգային SUՄ-ների դերի ուժեղացումը սոցիալ-տնտեսական զարգացման խթանման համար» ծրագիրը: Այն նախատեսում էր նախ սոցիալական կազմակերպել՝ ուսումնասիրելով աֆրիկյան SUՄ-ները, եւ առաջ գալ եզրակացություններով ու առաջարկություններով, 3 աֆրիկյան SUՄ-ների վերաբերյալ լուրջ հետազոտություն իրականացնել, Ուազադուգոյում կազմակերպել սեմինար, եւ գլխավորը՝ ավելացնել SUՄ-ների թիվը: Այսպես՝ 2010թ. սվյալներով՝ աֆրիկյան SUՄ-ների թիվը 15-ից աճել է 25-ի, չնայած նրան, որ նորաստեղծ խորհուրդներից շատերը ինստիտուցիոնալակարգի կամ իշխանությունների կողմից աջակցության պակաս ունեն:

- *SUIՄՄԱ-ն եւ ՄԱԿ-ի Տնտեսական եւ Սոցիալական հարաբերությունների ղեկարարամենտը (United Nations Department of Economic and Social Affairs – UNDESA)*

Այս կառույցի հետ նույնպես SUIՄՄԱ-ն ունի սերտ հարաբերություններ, որոնք անընդհատ առաջընթացի են միտված: Այսպես՝ երկու կառույցները իրենց շահերից բխող գլոբալ թեմաներ են առանձնացրել՝ մասնակցային ժողովրդավարության վրա հիմնված համաշխարհային գիտելիքի հիմքի ստեղծում, որի շրջանակներում պետք է ստեղծվի SUIՄ-ների տվյալների բազա եւ երկու կառույցների միջեւ տեղեկատվության պարբերական հոսք պետք է լինի այդ բազայի վերաբերյալ:

Մյուս համատեղ ծրագիրը վերաբերում է ազգային SUIՄ-ների դերի ավելացմանն ուղղված տեխնիկական համագործակցությանը՝ մասնավորապես Աֆրիկյան SUIՄ-ների դերի բարձրացմանը:

Այս ծրագրի շրջանակներում երկու միջազգային կառույցները համագործակցում են մի քանի ուղղություններով՝

- տեղեկատվության տարածում. մշտապես գործում է UNDESA-SUIՄՄԱ-անդամ SUIՄ-ներ տեղեկատվության հոսքը,
- խորհրդատվություն. SUIՄՄԱ-ն իր ծրագրերի իրականացման վերաբերյալ մշտապես խորհրդակցում է UNDESA-ի հետ,
- մասնակցություն. UNDESA-ի խնդրանքով SUIՄՄԱ-ն մասնակցում է կլոր սեղաններին եւ համաժողովներին,
- թրեյնինգ. SUIՄՄԱ-ն հանդես է գալիս որպես «ֆասիլիտատոր» աֆրիկյան SUIՄ-ների համար թրեյնինգներ եւ արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ ձեռնարկներ կազմակերպելու համար,
- համագործակցություն այլ կազմակերպությունների հետ. SUIՄՄԱ-ն որպես միջնորդ է հանդես գալիս UNDESA-ի եւ այլ գործընկերների հետ (Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողով, Ֆրանսիայի SUIՄ եւ այլն) հարաբերություններում:

- *SUIՄՄԱ-ն եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունը (Organization of economic cooperation and development – OECD)*

Այս կազմակերպության հետ համագործակցելու եւ համատեղ աշխատելու սկիզբը ազդարարվեց 2009թ.-ին, երբ SUIՄՄԱ-ն իր մասնակցությունը բերեց Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության համաշխարհային ֆորումի աշխատանքներին, որի շրջանակներում 1500-ից ավելի մասնակիցների համար տարբեր երկրների SUIՄ-ների ղեկավարների կողմից ներկայացվեց “SUIՄ-ների դերը” վերնագրով զեկույց:

- *SUIՄՄԱ-ն եւ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (International Labour Organization – ILO)*

Ինչպես SUIՄ-ներից յուրաքանչյուրը, այնպես էլ SUIՄՄԱ-ն բարեկամական կապեր են հաստատել Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ, որը միակ միջազգային կառույցն է, որտեղ արհմիություններն ու անհատ գործատուները ներկայացված են կառավարությունների ներկայացուցիչների հետ հավասար եռակողմ սկզբունքով՝ նպատակ

ունենալով աշխատանքային հարաբերություններում առավելագույն արդյունքի հասնել՝ ներագրավելով բոլոր շահառուներին:

2004թ. Ժնևում կայացած միացյալ հանդիպման ընթացքում ՏՄԽՄԱ-ն պարտավորվեց խթանել ՄԱԿ-ի աշխատանքի մասին կոնցեպցիան՝ նպատակ ունենալով վերացնել աղքատությունը:

- *ՏՄԽՄԱ-ն եւ Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողով (European Economic and Social Committee – EESC)*

ՏՄԽՄԱ-ն սերտ կապեր է պաշտպանում նաև Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի հետ, որի աջակցությամբ կառույցը փորձում է խթանել տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները եւ բոլոր հնարավոր երկխոսությունները ՏՄԽ-ների միջև: Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովը իր մեջ ներառում է Եվրոպայի 343 սոցիալական եւ տնտեսական խմբեր, որոնք ունեն 3 գլխավոր ուղղվածություն՝ գործատուներ, աշխատողներ եւ քաղաքացիական հասարակություն: Կազմակերպության նախաձեռնությամբ ՏՄԽՄԱ-ի եւ Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի միջև հաստատվեց ադմինիստրատիվ համագործակցության համաձայնագիրը (administrative cooperation convention):

ՏՄԽՄԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏՄԽՄԱ-ի ծավալած գործունեությունը թույլ է տալիս ենթադրել, որ ներկայիս փուլում կառույցի աշխատանքները *չոշափելի* արդյունքների չեն հանգեցրել, ինչը կապված է նախ ֆինանսական միջոցների բացակայության հետ: Չի կարելի հերքել կառույցի հայեցակարգային եւ բովանդակային նշանակությունը եւ համաշխարհային հրատապ խնդիրների վրա անդամ կառույցների ուշադրության հրավիրումը, որի արդյունքում անդամ ՏՄԽ-ները նույնպես դառնում են այդ գաղափարների կրողը եւ ազգային ծրագրի/ռազմավարության քննարկման ժամանակ արդեն դիտարկում են դրանք՝ ելնելով այս գլոբալ խնդիրներից: Իր հաշվետվություններում բարձրացվում են հիրավի առաջնային, աքսիոմատիկ ճշմարտություններ պարունակող գլոբալ խնդիրներ, բացարձակ արժեքներ, ինչպիսիք են աղքատության դեմ պայքարը, կայուն զարգացումը, առողջապահությունն ու միջազգային համագործակցությունը: Սակայն, իրավամբ, խորին էր կառույցի հաշվետվություններում որեւէ նախագիծ, ծրագիր, առաջարկվող մեխանիզմ կամ արված կառուցողական քայլ գտնել:

Կառույցը ինքնին բավականին հակված է միջազգային կառույցների հետ հնարավորինս սերտ հարաբերություններ պահպանելու, քանզի բացի ցանկացած նախաձեռնության պարագայում այլ միջազգային կառույցների գաղափարական աջակցությունը վայելելուց՝ նաև ակնկալում է ֆինանսական ներդրումներ եւ նյութական օգնություն արդեն “համատեղ” նպատակների իրականացման համար:

Խորհուրդը համակարգված կերպով արձանագրում է ֆինանսական միջոցների սակավության փաստը, ինչը խոչընդոտում է կառույցի թիրախային նպատակների իրականացումը եւ տարբերակներ է քննարկում հավելյալ ֆինանսավորում հայթայթելու համար: Այս առումով, որպես այլընտրանք, քննարկվում են հավելյալ ներդրումները, արհմիություններ, գործատուներ ներկայացնող կազմակերպություններից ֆինանսական աջակցության ձեռքբերումը եւ տարբեր հիմնադրամներից եւ միջազգային կազմակերպություններից միջոցների ստացումը:

Սրան ի պայցույց նշենք, որ 2009թ.-ից նոր նախագահության ստանձնման հետ միասին Գլխավոր Ասամբլեայի հավանության արժանացան եւ ընդունվեցին ՏՄԽՄԱ-ի զարգացման 6 ոլորտներ ընդգրկող կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերը, որոնցից մեկը հենց գործընկերական հարաբերությունների խթանումն էր միջազգային կազմակերպությունների հետ՝ մասնավորապես ՄԱԿ-ի ՏՄԽ-ի, ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական հարաբերությունների դեպարտամենտի, Աշխատանքի միջազգային կազմակերպության եւ մի շարք այլ կառույցների: Բացի դրանից՝ քննարկվում էր նաեւ մասնավոր հիմնադրամներից ֆինանսական միջոցներ կորզելու հնարավորությունը՝ գործի դնելով ՏՄԽՄԱ-ի կապերն ու խորհրդատվական մեխանիզմները: Որպես պոտենցիալ դոնորի՝ քննարկվում է նաեւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) թեկնածությունը, որի հայթայթման գործում պետք է ակտիվ լինեն հենց տեղական ՏՄԽ-ները:

ՀՀ ՀԽ-Ի ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՄԽՄԱ-ԻՆ. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԻՎԴԵՆՏՆԵՐԸ

2009թ. մարտ ամսից ՀՀ նախագահի հրամանագրով իր գործունեությունն է սկսել ՀՀ հանրային խորհուրդը՝ նպատակ ունենալով խթանել հասարակական-քաղաքական երկխոսությունը: Ըստ կանոնակարգի՝ ՀԽ-ի կազմը համալրում են ընդդիմության եւ իշխանության մաս կազմող քաղաքական ուժերը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ու բոլոր շահագրգիռ կողմերը:

Իր կազմում ունենալով 10 հանձնաժողով՝ ՀՀ ՀԽ-ը խորհրդակցական մարմնի դեր է կատարում երկրում՝ փորձելով կառուցել իշխանություն-հասարակություն կամուրջը, քաջալերել նրանց միջեւ երկխոսությունն ու համագործակցությունը:

2009թ. ՀՀ ՀԽ-ն հայցով դիմել է ՏՄԽՄԱ-ին նախ ասոցիատիվ անդամի կարգավիճակով, իսկ հետո նաեւ լիարժեք անդամ դառնալու ցանկությամբ: Այդ պատճառով, դուրս թողնելով ՀՀ ՀԽ բուն ներպետական աշխատանքային պրակտիկան կամ պետության մեջ դրա նշանակություն, անդրադառնամ հնարավոր անդամության պարագայում ՀՀ ՀԽ-ին ընձեռվող հնարավորություններին, հնարավոր ուղիներին, նոր տեսլականներին, որոնք ՀԽ-ն կկարողանա արդյունավետ օգտագործել եւ ծառայեցնել կառույցի գործունեությունն իր շահերին:

SUԽՄԱ-ի գործունեության, անդամ-SUԽ-ների, Ասոցիացիայի գործառույթների, աշխատանքային մեխանիզմների վերլուծությունը մեկ նպատակ էր հետապնդում՝ դրա արդյունքում գտնել այն առանցքը, հստակ առանձնացնել այն ոլորտները եւ ցույց տալ այն մեխանիզմները, որով ՀՀ ՀԽ-ն կարող է իրական համագործակցության եզրեր գտնել, ընդհանուր շահերի հարթություններ դիտարկել, նոր հեռանկարներ քննարկել, որոնց արդյունքում այս անդամակցությունը ՀՀ համար դառնա իրապես արդյունավետ:

Այսպես՝ նախ պետք է հստակ արձանագրենք, որ SUԽՄԱ-ի այս ձեռնարկը դեռ երիտասարդ է եւ նոր է մտնում “համաշխարհային օրակարգ”, երեւան է հանում զարգացման *տնտեսական եւ սոցիալական* ասպեկտները՝ մի բան, որ այլ միջազգային կառույցների գործառույթների համատեքստում ընդհանուր ռազմավարական զարգացման գործոններից մեկն են միայն: Այսինքն՝ զուտ քաղաքական բնույթից անցում է կատարվում ավելի “փափուկ”, ընդհանուր շահերի որոնման համար ավելի հարմար ասպարեզ:

ՀՀ-ի քաղաքական իրավիճակը դյուրին չէ, քանի որ թե՛ աշխարհագրական, թե՛ զուտ քաղաքական, թե՛ տարածաշրջանային տեսանկյունից ՀՀ-ն հանդիպում է բավականին լուրջ խնդիրների: Այս առումով տնտեսական ու սոցիալական ոլորտը եւ այս ոլորտների հիման վրա համագործակցությունը ապահովում է այն “չեզոք” գոտին, որը թույլ կտա շրջանցել քաղաքական կոշտ խոչընդոտները՝ հաղթահարելով դրանք “տնտեսական զարգացման” դրոշի ներքո:

Ինչ վերաբերում է հենց SUԽՄԱ-ին, ապա կառույցը չի տիրապետում լուրջ ֆինանսական միջոցների, այլ աշխատում է բացառապես անդամավճարների հաշվին, հետեւաբար հնարավոր անդամության պարագայում ուղղակի ֆինանսական միջոցների հոսք ակնկալելն անհիմաստ է: Սակայն այս շարժիչը կարելի է աշխատանքի մեջ դրել այլ՝ անուղղակի մեթոդներով:

Եթե փորձենք ՀՀ ՀԽ-ի համար զարգացնել համագործակցության հնարավոր սցենարներ, ապա կարող են պայմանականորեն դրանք բաժանել մի քանի վեկտորների:

ա) SUԽՄԱ-ն ինքը ձգտում է նորանոր գործընկերներ ձեռք բերել՝ ի դեմս միջազգային մի շարք կառույցների, հանգամանք, որը արդեն բավականին լուրջ խթան է ՀՀ համար:

Հետեւաբար ՀՀ-ն պետք է դիտի SUԽՄԱ-ն նրա՝ միջազգային այլ կառույցների հետ հարաբերությունների պրիզմայով եւ փորձի դիվիդենդներ քաղել դրանից: Կառույցը պետք է դառնա հավելյալ լծակ, խթան միջազգային կառույցների հետ իր հարաբերություններում: ՀՀ արտաքին քաղաքական գերակայություններից մեկը միջազգային կառույցներին հնարավորինս ինտեգրումն է, որին էլ ծառայում են SUԽՄԱ-ի հետ հարաբերությունները: SUԽՄԱ-ի միջոցով ՀՀ ՀԽ-ին հնարավորություն կընձեռվի իր տեսակետները հայտնել տարբեր կազմակերպությունների դիրքորոշումներում եւ անմիջականորեն շփումներ ունենալ ՄԱԿ-ի կառույցների, Աշխատանքի միջազգային ասոցիացիայի եւ այլ միջազգային կառույցների հետ:

բ) Բացի SUԽՄԱ-ի, որպես առանձին միջազգային միավորի հետ համագործակցությունից՝ ՀՀ ՀԽ-ն այս համագործակցության շրջանակներում կարող է կապեր հաստատել անդամ-SUԽ-ների հետ, որոնք կիսում են այս կամ այն խնդրի վերաբերյալ մեր տեսակետները: Լինելով սոցիալական, տնտեսական եւ քաղաքացիական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ անդամ-SUԽ-ները կարող են շատ արժեքավոր եւ կենսական փորձ ունենալ, որոնք ՀՀ ՀԽ-ն կարող է ընդօրինակել:

Դրա արդյունքում կձեւավորվեն համախոհների խմբեր, որոնց առկայությունը կհեշտացնի ցանկալի որոշումների ընդունումը կառույցում: Բացի դրանից, անդամ SUԽ-ների հետ սերտ հարաբերությունները կարող են տեղափոխվել նաեւ այլ ոլորտներ, որոնք նույնիսկ դուրս են SUԽՄԱ-ի շահերի շրջանակներից: Այսպիսով՝ ՀՀ ՀԽ-ն ձեռք կբերի համախոհներ եւ արդեն փորձառու գործընկերներ համապատասխան ոլորտներում:

գ) Անդամ-խորհուրդների հետ համագործակցության համատեքստում կարելի է առանձնացնել եւս մեկ ոլորտ, որը, կարծում եմ, ուղղակի ծառայում է ներկայիս արտաքին քաղաքական պահանջներին:

2009թ. ազդարարվեց Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի եւ Հարավկովկասյան երեք երկրների հետ նոր՝ “Արեւելյան համագործակցության” սկիզբը, որով Եվրոպան նոր ձեւաչափ է ներկայացնում այս երկրներին՝ նախատեսելով ինտեգրացում քաղաքական, տնտեսական, մարդկային բոլոր ասպարեզներում: Փաստ է, որ ՀՀ-ում Ասոցիատիվ համաձայնագրերի կնքումը պետք է նախորդի շատ լուրջ ներպետական ջանքերի՝ հանրային կառավարման, տնտեսության, էներգետիկ եւ միջանձնային հարաբերությունների ոլորտներում:

Ահա այստեղ անհրաժեշտ է առանձնացնել Եվրոպական տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի (EESC) դերը, քանի որ վերջինս կարող է բավականին կառուցողական լինել ՀՀ ՀԽ-ի համար: ՀՀ ՀԽ-ն կարող է համագործակցել եվրոպական արդեն “փորձառու” SUԽ-ների հետ, պարզել դրանց դերակատարումը նմանօրինակ ձեռնարկներում, խորհրդատվական գործառնության կիրառելիությունը եւ քաղաքական օղակների հետ դրանց համագործակցության չափն ու մակարդակը եւ ստացված պատկերը անդրադարձնել ՀՀ-ում՝ իհարկէ հաշվի առնելով մեր ազգային խճանկարը:

դ) Բովանդակային եւ կառուցողական ռազմավարությունների տեսակետից SUԽՄԱ-ի որդեգրած եւ թմբկահարած արժեքներն ու գաղափարները անշուշտ կարելուք են, սակայն դրանց տեղային կիրառելիության հնարավորությունը ՀՀ ՀԽ-ի գործունեության մեջ մի փոքր չափազանցված կլինի, եթէ ասենք, որ ՀՀ ՀԽ-ն իր գործնական աշխատանքներում այլեւ կգործի միմիայն այդ համընդհանուր արժեքներից ելնելով:

Բայցեւայնպէս, SUԽՄԱ-ն իրենից ներկայացնում է կոնսուլիդացված այն ֆորումը, որտեղ առկա են տարբեր սոցիալական շահերն ու խնդիրները, այն հարթությունը, որտեղ տեղի են ունենում մոտեցումների սինթեզը, փոխզիջումներն ու համընդհանուր շահերի որոնումները:

Եթէ ՀՀ ՀԽ-ն իր գործողությունները մտցնի Ասոցիացիայի “բացարձակ արժեքների” ձեւաչափի ներքո, ապա այն կարող է ստանալ միջազգային հանրության օժանդակությունը, լսելի դարձնել տնտեսական եւ սոցիալական խնդիրները միջազգային հանրության համար եւ ձեռք բերել եւս մեկ պլատֆորմ հանրային խնդիրների բարձրաձայնման համար:

ե) ՀՀ ՀԽ-ի ստեղծումից ի վեր հայկական հասարակությունում շատ ակտուալ են դրա՝ որպէս ոչ արդյունավետ կառույց լինելու վերաբերյալ խոսակցությունները, մեծապէս այն պատճառով, որ ստեղծված լինելով ՀՀ նախագահի նախաձեռնությամբ եւ հիմնական անդամների առաջադրմամբ՝ այն չի ներառել հասարակության բոլոր շերտերին ու դրանց շահերը եւ չի կարող իրապէս ներկայացուցչական լինել: Իսկ Ազգային մակարդակում հաջողությունների ձեռքբերումը հնարավոր է այն պարագայում, եթէ SUԽ-ն մի կողմից համագործակցի իշխանությունների հետ, մյուս կողմից վերահսկի եւ գնահատի նրանց կողմից ընդունած որոշումների գործնական կիրառությունը:

Այս առումով ՏՄԽՄԱ-ի հետ համագործակցությունը վստահաբար կբարձրացնի ՀՀ ՀԽ-ի հեղինակությունը, քանի որ այն կորդեգրի ՏՄԽՄԱ-ի սկզբունքներն ու փորձ կանի առաջնորդվել հենց այդ գաղափարներից ելնելով:

Այսպիսով, եթե ընդհանուր առմամբ գնահատելու լինենք ՀՀ ՀԽ-ի անդամակցությունը ՏՄԽՄԱ-ին, ապա ակնթարթային օգուտ ակնկալելը իրատեսական չէ, սակայն երկարաժամանակյա կտրվածքով այս ձեռնարկը շատ արդյունավետ կարող է դառնալ ՀՀ ՀԽ-ի համար ինչպես այլ երկրների ՏՄԽ-ների հետ փորձի փոխանակման եւ գործունեության բարելավման, այնպես էլ հենց Հայաստանում դրա դերի ավելացման տեսանկյունից: